րըն Կոստանդ: Նա գնաց յԱթէնս, և ու-
սումնակցեցաւ Գրիգորի և Բարսեղի:
Եւ զարգացեալ կարգեցաւ 'ի յորդւոյն
մեծին Կոստանդիանոսի՝ զօրավար արևե-
լից: Եւ հպարտացեալ 'ի վերայ յաղթու-
թեանն՝ կամէր թագաւորել. զոր իմացեալ
Կոստանդեայ թագաւորին, սպանանել կա-
մէր զնա: Որ և փախեալ աննշանեաց զին-
քըն և եղև աբեղայ 'ի վանս ինչ: Եւ
իբրև մեռաւ հօրեղբօրորդին իւր Կոստանդ
թագաւորն, սա ուրացողն զՔրիստոս՝
Յուլիանոս՝ միահեծան թագաւորեաց
Հռոմայ և Կոստանդնուպօլսոյ: Եւ բա-
զում քրիստոնեայս նահատակեաց. և գը-
նացեալ յԵրուսաղէմ՝ զամենայն անօրի-
նական տեղեան Քրիստոսի քակեաց: Եւ
հրամայեաց ժողովել Հրէից և շինել
զտաճարն. զի սուտ հանցէ զբանն Քրիս-
տոսի՝ որ ասէ, մի՛ մնասցէ այդր քար 'ի վե-
րայ քարի: Եւ իբրև կատարեցին, էջ հուր
յերկնից և այրեաց զամենայն զշէնք տա-
ճարին: Եւ Յուլիանոս բարկացեալ՝ նա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան